

ները, բայց միակ միջոցը այդ պահանջներին դեմ համարում է «մաքերի» Բ. Ֆ. Օրմը: «Ես տածում եմ վատահու- թիւն դէպի մարդկային միտքը, ասում է նա, ես հաւատում եմ ազատութեան»:

Մ. Օրմի Բ. Ֆ. Օրմի ասում է. «Մամու- լը, մերկացնելով հասարակական տեսերը և ծանօթացնելով հասարակութիւնը այն սկանդալների հետ, որոնք առանց նրա մի- ջամուտի մեան անյայտ կը մնային, կատա- րում է վերաբերման դեր, պատուելով իր դա- նակով պաշտօնները: Փառք այն գրողներին, որոնք կատարում են կրկնակի պարտաւո- րութիւն. կարում են փոսած մասերը և պահպանում են վարակուսից մնացած օր- դանները»:

II

Ինքն ըստ ինքեան շատ ցաւալի է, որ Ֆրանսիայի մէջ այժմ հարաւոր է հա- մարում հրապարակով հայց դնել, թէ արեւօք զննասկար, թէ օգտակար է մա- մուլի ազատութիւնը: Եւ եթէ այդպիսի մի հայց հրապարակ է բերվում և լուրջ քննութեան ենթարկվում, դա տեսնու- պէս Փարիզի մամուլը բարոյապէս ծայ- րայեղ անկման է հասել: Երեւի հանրա- պետական ազգի լաւագոյն ներկայացուցիչ- ները գտնում են, որ Փարիզի անբարոյակա- նացած, փողոցային դարձած լրագրութիւ- նը վտանգ է սպառնում տղաքրական խոս- քի ազատութեան, և հաճախ այդ վտանգի դէմ միջոցներ են որոնում...

Այդ անպայման ցաւալի փոստի գիմաց միակ մտխիտարարումը այն է, որ համա- րեա ըրոր ուղղութիւններին պատկանող գործողները և գործները վնասակար կար- ծիք են յայտնում, որ Ֆրանսիական մա- մուլի անկման պատճառը նրա ազատու- թիւնը չէ: Ինքը Ֆրանսիական հասա- րակութիւնը դարձել է սիրահար փողո- ցային թերթերի, որոնքում է լրագրու- թեան մէջ սկանդալներ, սուտ, բայց յուզիչ նորութիւններ, հրճուանքով է կար- դում ամենազուրկի նկարագրութիւններ այս և այն մարդու մասնաւոր կեանքի մասին, և իր այդ տեսակ անբարոյական հակումներով ուղղակի նպաստում է ան- բարոյական մամուլի զարգացման և տա- րածման: Եւ եթէ նոյն հասարակութիւնը փոխի իր ճաշակը, ուրիշ պահանջներ անի մամուլից, զրուանք արտայայտի դէպի փո-

ղոցային, ստախոս, անբարոյական մամուլը, այդ մամուլը շատ շուտով ստիպված կը լինի կամ կերպարանափոխել, կամ դադա- րել գոյութիւն ունենալուց...

III

Մենք հայերս էլ ունենք փողոցային, անբարոյականացող մամուլ: Նոյնը կայ և ուստաց լրագրութեան մէջ: Բայց եթէ մեզ հարցնեն, թէ արեւօք պէտք է «հաճա- րում է այդ տեսակ մամուլի իրաւունքները և արգելել նրանց գրելու ազատութիւնը, մենք առանց մի վայրկեան տատանվելու կը պատասխանենք՝ երբեք: Մեր մամուլը և գրականութիւնը ենթարկված է զրա- քննական որոշ օրէնքներին, բայց և այնպէս դա չէ ազատում մեզ այն տեսակ լրա- գրութիւնից, որ կոչվում է փողոցա- յին: Այդ տեսակ լրագրութեան ասնձա- հարդը, ինչպէս շատ լաւ նկատում են Եւրօպայի գրողները, ինքը հասարակու- թիւնը պիտի լինի: Անբարոյական հրա- պարակածները տարածում են ստեր, գրգռում են մի ազգ միւսի դէմ, շուտ- փում են այս և այն գործողի մասնաւոր կեանքը, ճիւղալային աղաղակ են բարձրաց- նում ամեն մի նոր մտքի, նոր շարժման դէմ, որովհետեւ անկիրթ հասարակութեան կողմից հաւանութիւն են նկատում, և այդ հաւանութիւնը նրանց նոր խրախոյս է տալիս, և շատ անգամ հասցնում կա- տարեալ լրագրութեան: Բաւական է, որ ինքը հասարակութիւնը զրուանք յայտնի դէպի անբարոյական, վաճառվող փողոցային մա- մուլը, և նա, կրկնում ենք, կամ անմիջա- պէս կը կերպարանափոխվի, կամ կը դա- դարի գոյութիւն ունենալուց: Այդպէս պիտի լինի ոչ միայն Ֆրանսիայում, այլ ամեն տեղ, ուր արդէն սկսել է ծաղկել յայտնի տիպի լրագրութիւնը՝ փողոցային անարգ մամուլը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր

XXXI

Անդրապատ, մի յարգելի հայ գործիչի նախա- ձեռնութեամբ, ինչպէս արդէն յայտնի է «Մշա- կի» լոնդոնի թղթակցի նամակից, հիմնված է մի արձեւտագիտական-լրագրար՝ թիւրքաց կո- տորաներից ազատված հայ սրբուրի պատըս- պարելու և կրթութիւն տալու համար: Նպատա- կը գտնվի է և խրախուսանքի արժանի:

Անանկութիւն է սկսվել: Գծադր լուսանկարը ծախում է իր գրաւը, իր թափախալ բաճկոնը, մնում է ծախել լուսանկարչական գործիքը և գործակաւոր դառնալ մի խանութում: Մայրը յուսաճատութեան մէջ է, կտրված երեխաները նոյն իսկ պատշգամբ էլ չեն գնում:

Բայց չարաթի սուտօտը, այն րօպէին, երբ ոչ գրին չեն էլ սպասում, լուրում է դանդաղել ձայ- նը: Գա մի ամբողջ հարսանիք է—փեսան, հար- սը, խաչդրայրները, թագաւորադրոյրները: Բարի մարդիկ իրանց կեանքում առաջին անգամն են ձեռնդրել հաղթի և ուղում են յաւերժացնել այդ մեծ օրվայ յիշատակը:

Լուսանկարը վերցրել երեսուն և փոք ֆրանկ: Երկրորդ օրը երկու անգամ աւելի մուսք եղաւ: Տանջանքը վերջացաւ: Լուսանկարչատունը հաստատ հիւրերի վրա գրվեց...

Սա մէկն է այն հազարաւոր գրամանկրից, ո- րոնք տեղի ունեն Պարիզի մանր արդիւնարերու- թեան շրջանում:

Կ. ՊՈԼՍԻ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ

III

Երբորդ օրը, օգոստոսի 16-ին, նորից գնացի հիւպատոսարան: Առեանի ժամանակն էր: Հիւ- պատոսն այնտեղ չէր: Տեսնվեցի փոխ-հիւպա- տոսի հետ, համառօտ կերպով պատմեցի այն կամայականութիւնները մասին, որ իմ վերա- բերմամբ թող էր սոււն իրան թիւրք ոտովիա- նութիւնը: Հարցրեց, թէ կամենում եմ ար- քեզ, որ պաշտօնական ձև արվի իմ բողոքին: Կա եկել եմ ոչ իրեն բողոքող, պատասխա- նեցի ես, այլ կարծելով, թէ իմ պարտականու- թիւնս էր յայտնել մեր հիւպատոսարանին այդ կամայականութիւնները մասին, որովհետեւ նրանց ենթարկվում են բոլոր ուսումնասիրող ընդհանրա- պէս և նոյն իսկ ուրիշ ուսումնասիրողներ, ո- րոնք, ինչպէս իմ ուղեկից վրացիներին, որ և է պատճառով հայերի տեղ է ընդունում թիւրք ոտովիանութիւնը: Ինչ նպատակ ունէր փոխ-

Սախյան մի հարց.—որքան գործնական է այդ պիսի ապաստարան-կրթարան հիմնել Հայաստա- նից շատ հեռու գտնվող մի երկրում, ուր, չը նայած բոլոր յարմարութիւններին, շատ դժուար է խմել այն թշուառներին, որոնք ցրվ ու ցան են եղել կամ աւերակ երկրի մէջ, կամ նրա չըր- ջակալքում: Մեր կարծիքով այդ գործնական չէ:

Հայկական կոտորածներից ազատված, բայց անտէր մնացած որբերին խնամել և կրթելը՝ հայ հասարակութեան ամենադժուար պարտաւորու- թիւններից մէկն է այժմ, բայց դրա համար պէտք է որ բան ոչ ոք չէ, կը թարաննեն և ու պատարաննեն հիմնել ոչ թէ Գերմա- նիայում, Անդրկայում, Ֆրանսիայում և Ամերի- կայում, այլ Փոքր-Ասիայի քիչ շատ ապահով տե- ղերում, և կամ հայկական նահանգներին մօտիկ գտնվող երկրներում, ինչպէս՝ Բոլղարիա, Սեր- բիա, Եգիպտոս, Կիպրոս, Պաղեստինէ, դէպի ուր զաղթական հոսանքը, բնականաբար, տանում է անտէր որբերին և որտեղ գուցէ դեռ երկար ժամանակ ապաստան կըրնեն երկրից դուրս վաճառող աղքատակրթիւն մնացորդները:

Հայաստանից լոնդոն կամ Ֆրանկֆուրտ, Նիւ- իօրի կամ Պարիզ որբեր տեղափոխել ինքն ըստ ինքեան արհեստական գործ է, և չը նայած, օրինակ՝ Անդրկայում հիմնված կրթարանի ղեկա- վարի միանգամայն բարի նպատակներին, հաս- տատարական կարելի է տուել, որ այդ հեռուոր որբանոց-կրթարանները աղքատութիւն չեն կարող ունենալ, և ընդհակառակն, եթէ մօտիկ ապագա- յում թիւրքաց Հայաստանում համեմատաբար աւելի խաղաղ վիճակ տեսնվի և պանդուխտ- փողոցները սկսի վերադառնալ հեռուոր կենտ- րոններում գտնվող ապաստարան-կրթարանները կը դառնան միանգամայն աննպատակալար և կը մեռնեն բնական մահով: Ահա այդ պատ- ճառով միջ թոււմ է, որ բոլոր գործողները և աշխատողները իրանց ուժերը պէտք է կենտրո- նացնեն երկրին մօտիկ կենտրոններում, ուր հէնց այժմ էլ խմբված են մեծ թուով փախուտա- կան-հայաստանցիները:

Խ. Մարտիան

ԹԱՆԻՈՒԹԻՒՆ

(Նամակ Ստամբուլից)

«Թանգութիւն», այս բառը ճակատագրական նշանակութիւն ունի ժողովրդի համար և կարօտ չէ ոչ մի բացատրութեան: Երբ ասում են «Թան- գութիւն է», այլ ես ոչ ոք չէ հարցնում, ինչն է թանգ. ամեն մարդ գիտէ, որ այդ զարհուրելի բառը բացատրապէս հայերն է վերաբերում: Թան- գութիւն է և սով մեծ ժողովրդի համար՝ հո-

հիւպատոսը, չը գիտեմ, միայն առաջարկեց ինձ իրան համառօտ կերպով ասած մանրա- մասնօրէն պատմել պ. Վիլիբրովին, որ երեկ հիւպատոսարանի քարտուղարն էր կամ գործա- վարը: Միջոցով ես այդ պաշտօնակցին վրացու տեղ ընդունեցի, բայց դուրս եկաւ, որ կով- կասեան թուրքերիցն է: Լսելով փոքրիկ ողի- ականաւ, նա հետաքրքրվեց խմաւար թէ ար- քեզ թելովը կամ ուրիշ զէնք չեն կուլ ինձանից, որ հիւպատոսարանը յետ պահան- ջէ: Յայտնեցի, որ հետո զէնք չունեն, բայց վրաս չը նայեցին և որ, իմ կարծիքով, իրա-ւունք էլ չունեն նայելու:—Այժմ իրաւունք չեն հարցնում, ասեց պ. Վիլիբրովը, կարող են հէնց այս գիշեր գալ հիւանդոց և ձեզ ձերբակալել, յամենայն դէպս խնայեք, որ այստեղ միշտ հեր- թակած պաշտօնակց է լինում, և ծառայի միջո- ցով իսկոյն իմաց տուէք մեզ, եթէ անհիմն կառ- կածներ տանելով դան ձեզ ձերբակալելու:

Շատ էլ միջոցաւարական չէին պ. Վիլիբրովի խօսքերը: Ինձ համար չէին վախենում—կը ձեր- քակալեմ և իսկոյն կարճակէին, բայց մօտո կա- յին յանձնարարական նամակներ մի քանի ան- ձանց անուամբ որոնք անպատճառ կասկածի տակ կրնինէին, եթէ ես լուսնվի, չը նայելով որ՝ նրանց ուղղված նամակները բոլորովին անմեղ բովանդակութիւն ունէին: Ժամանակն այնպէս էր, որ չէր կարելի արձամարանելով վերաբերվել զէպի այդպիսի մի հանդուանք: Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից առաջ արքանաւան լet- tre de cachet-ների ժամանակ, թէ նոյն իսկ մեծ յեղափոխութեան միջոցին՝ տէրբորի ժամա- նակ, լաւ չիտ, մի քանիստ այդպէս է բը- նորոշել այն շրջանի արդարադատութեան վիճա- կը: Եթէ մէկը վեր կենալ, ասել է պրախտը և յայտնի, թէ ես գողացել եմ Նոտր-Դամ եկեղե- ցու մեծ դանդաղ ու կախել ժամացոյցիս չղթայից, էլ չեմ աշխատի ինձ արդարացնել՝ ա- ուրբիւրով, թէ այդ անհար բան է, այլ ուղղա- կի կառք կը նստեմ ու կը փախչեմ Ֆրանսիայից: Եւ ինչ որ բօտանկական այդին Թիֆլիսի հա- մար՝ այն տարբերութեամբ միայն, որ այնտեղ՝

մանիշ բաւեր են: Յայտնի չարաբաստիկ տարուց յետոյ անցնում են տարիներ, բարեփոխվում է տանջվածների անտեսական վիճակը, բայց «Թան- գութիւն» չէ մոռցվում: Մի անգամ սարսա- փած միտքը ամենից լաւ յիշում է այն դէպքե- րը, ընտանեկան թէ հասարակական, որոնք այդ չարաբաստիկ տարին են տեղի ունեցել: Մայ- րերն ամենից լաւ գիտեն իրանց այն դատակնե- րի տարիքը, որոնք դժբաղդութիւն են ունեցել այդ տարափոխի տարում՝ ծնվելու: Ժողովուրդը չէ մոռանում իր այն կոտորածների դրոշմա- նութիւնը, որ թանգութեան տարին է կատարել:

Յօրենի գինն օրէցօր բարձրանում է: Արդէն 30 բուլլուց բարձր էլ է ծախվել խաղաղը, իսկ դարին 25 բուլլու: Փառք Աստուծու, որ ներկայ «Թանգութիւն» այն թանգութիւններից չէ, ո- րոնց յիշողութիւնն այնքան դառն և այնպէս անջնջելի է մնում մեր ժողովրդի համար: Չա- րիքն այնքան էլ սարսափելի չի լինի, եթէ հայի գինը չը շարունակի այսուհետեւ բարձրանալ, լուր կայ նաեւ, որ Բալագլեայի էլ ցորեն կը բերվի շուտով, արդէն գնացողներ եղել են:

Երբեք այս կացութեան մէջ անուշտ հետաքր- քիր է թէ ինչ վիճակի մէջ են Ստամբուլում ապաստանած հայ դաղթականներն և ինչպէս են ապրում, ինչով կերակրվում: Այս բոլոր հար- ցերի պատասխանը մի բառ է միայն—մու- րում են: Գոնից դուռ թափառող և փշրանք- ներ, այս, իսկապէս փշրանքներ հաւաքող կա- նանց և աղջկաներ թիւը ներկայումս բաւական մեծ է,—մի երեւոյթ, որ անցեալ տարի, երբ Բա- րեղաթական ընկերութիւնը գործում էր, օգնու- թիւն էր մատակարարում, տեղի չունեցաւ: Գաղ- թականները թողնված են չար ճակատադրի կամ- քին և չարահամար են հային միայն յատուկ համբերութեամբ կրել մի վիճակ, որի ակնարկը նրանց արկնուտ հայրենիքումն է գրված: Վերա- դառնալու յոյսը նրանցում դեռ կորած չէ, բայց իրերի ներկայ գրութեան մէջ նրանք ոչ մի պայմանով չեն վերադառնալ:

—Ինչ կայ դրուկ էաւ խորտակ թղթի մէջ, ասեց ինձ անցեալ օրը մի գաղթական, ձեռքիս «Մշակ» տեսնելով:

—Ոչինչ, ասեցի, չը հասկանալ ձեռքնիւր իրա հարցը—գնաւապէս տեղեկութիւններ դէպից դէպից:

—Ապա մեղի խաւ բան չը կայ գրուի, ապա մենք եմ ար դառնալ մեր երկիր:

—Ո՛վ է ձեզ արգելում ձեր երկիր դնալ, դա- ցեք էլի, այժմ էլ կարող եք դնալ և լաւ կանեք, որ չուտով դնաք, այնտեղ էլի լաւ կապեք, քան թէ այստեղ:

ճանաչում է իրան, պատուիրում է տանկերիւ հատ պատկեր, վնասում է փողը և հիացած դուրս է գնում:

Դա գնաց: Գուռը փակվեց նրա ետեղից: Կեցցէ ուրախութիւնը: Գարանից ազատված երեխանե- րը ոտատնում են գործիքի չուրջը: Հայրը շատ յուզված է իր առաջին գործից, հանդիսաւոր ձե-ւով չիում է ձակաթը թաշկինակով:

Օրը մօտենում է իր վերջին: Մայրը շտապով ցած է գնում ճաշ բերելու: Այդ օրը կարելի է թող տալ աւելի շքեղ ճաշ ի պատիւ առաջին թաւախորդի: Պէտք է և կարգ պահպանել. և նա մօտիկ խանութից վերցրեց կանաչ կաղնիով մի մեծ գլրը, որի մէջ դեղեցիկ, խոշոր ստաւերով արձանադրում է պատուելի օրը, պատուէր ար- լողի անունը և ստացած գումարը—տանկերիւ ֆրանկ: ձիւղ է, գլխու պատճառով, որ լամվեց ի պատիւ յաճախող ախկնոյ, կարկանդակի, այլ և տան համար վառելիք, չաքար և մօմեր գնելու պատճառով ծախքերը հաւասար են ստացածին, բայց դա դատարկ բան է: Եթէ լուսանկարչա- տուն բացած առաջին օրը, այն էլ այդպիսի ան- ձրեային օր, աշխատեցին տանկերիւ ֆրանկ հապա ինչ կը լինի վաղը:

Ամբողջ երեկոն անցնում է ծրագրերի կադ- մելու և զանազան ցնորքների մէջ: Զարմանալի է, թէ ողբան ծրագրերն են տեղադրվում երեք մանրիկ սենեակներից բաղկացած այս բնակարա- նում, նոր տան հիւրերորդ յարկում...

Միւս օրը հիւանդի եղանակ է, բայց մի մարդ էլ չէ գալիս: Ինչ արած, այսպէս են առեարի քմահաճութիւնները: Երեկվայ ճաշից մի կտոր կարկանդակ է մնացել, գոնէ երեխաները կուշտ կը լինեն:

Երբորդ օրը—նոյնպէս, ոչ մի հատ յաճախորդ: Նորից սկսում են դիտել պատշգամբից, բայց ասանց որ և է աջողութեան: Հարաւի բնակչու- հին գալիս է իր պատկերները տանելու—և այլ ևս ոչ ոք: Այդ օրը դրաւ են գնում մի ներքնամ, որ հաց առնեն...

Անցնում են էլի երկու երեք օր: Կատարեալ

Եւրոհակաւթեան արժանի են բոլոր մաս-
նակցողները: Երեկոյթի բաւական շատ ծախսերը
հանկուտ յետոյ՝ դուրս 900 բոլբոլ չափի զուտ
արգիւնք մնալ: Ս—Թ.

ՆԱՄԱԿ ԿԱՐՄԻՑ

Պեկտեմբերի 7-ին

Դատաւորը լսելով ելելու հրովանքի բացատրությունը, դատապարտեց Տէր-Մեղիկեղոսի անցնելն 2 տարվա առաքելության: Լուսմ եւրո, որ պարտաւոր է անրաւական է մնացել վճռի և մտադիր է գործը անցկացնել նաճանգական դատարանը: Մեղիկեղոսը կարծիքով գործը սկզբից և եւթ պատկանում է նաճանգական դատարանի իրաւասութեանը:

7.

ՆԱՄԱԿ ԱԼԷԳՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Պեկտեմբերի 3-ին

«Մշակիչ» մէջ Լուր էր հաղորդված Էջմիածնից, թէ Գառնակերևանց եպիսկոպոսը ուղարկում է Ալեքսանդրօպօլ՝ նախկին յաջորդ Գարեհի վարդապետ Սարկունեանցի գործերը քննելու ամարը։ Այդ Լուրը ձևվում է։ Արդեն եկել է բրազիլացի, սինօդի կարգադրութեամբ՝ քննելու պատեղի յաջորդաբարնի շինութեան գործը, որ ատարել էին Սարկունեանց վարդապետը և Մարիրոս քահանան։ Գա ուրախալի է։ Անկասկած հմտութիւնը լաւ բան է, և եթէ կան զեղումները, հարկաւոր է անպատճառ դուրս դերել։ այց վարմանալի է մեր սրբազան հայրերի վարչութեանը։ Յիշում ենք ակամայ ժողովրդական ասածը թէ՛ «Վրադաջըը կորցրել, չախչալը մանն գալիս»։ Փանի-քանի անգամ մամուլի մէջ լինել է և Էջմիածնի սրբազան հայրերին էլ առ. յայտնի է, որ Հառիձի վանքը ունէր և ունի հառաչի կիսաբնակարան, սպանալ, կալուածքներ և թէ յիշեալ ճակերութեան հողաբարձութեան նախագահի և անդամներից մի կրկուրի վախճանելուց յետոյ, վանքի հաշիւները և փողերը մնաւին են զրկւցրիւ։ Ոչ ոք պարտավորութիւն չէ անարում հաշիւ տալ։ Գոնէ ձեռնարկն այժմեան տեսուէր (կարապետ Կոստանեան), որդէս անդուցեալ նախագահի աւագ որդի, միթէ պարտաւոր չէ հաշիւ ներկայացնել հասարակութեանը։ Հառիձի վանքը առած ունի ջրաղացներ, հոներ, քաղցրութեան Գարութիւն աղա Գարութիւնեանցի կալուածքները։ Ո՞վ է ստանում նրանց ընէր, ո՞ւմ անուումը կան հաստատած այդ կալուածքները, ի՞նչ երաշխաւորութիւն կայ, որ այդ կալուածները և փողերը չեն դառնայ սրտ և բա սեփականութիւն։ Ահա այս բանի վրա ես արկաւոր է Լուրջ ուղարկութիւն դարձնել և ուսումը խիտ ու անաչառ քննիչ ուղարկել, որ բաւալ այդ հաշիւները պարզվեն և կորստեանը մատուցեն։

ՀԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ, դեկտեմբերի 12-ին

խնդրում եմ աղաղակ այս երկուողոր: ՓԻՖՆԼԻԻ
այդ փողոցային խեղճի ոգևու զարեոմ իմ
այցախայտի խնդի, ինչպես լեցից զանազան
ըպարտոմ իմաների չարքում, հրատարակե ին
այն տատ լուրը, որ իրը եմ արձակվում
մ: Կզիցի ինչպե Քարեղոթման ընկերու-
եան խորհրդի քարտուղարի պաշտօնից:

Իրրոգութիւնը հետեւեալն է: Պէտք ունենալով նաւ Պարսկաստան իմ անձնական գործերով եւ դիմելի ընկերութեան խորհրդիկն եւ խնդրելիս ինձ երկու ամսովայ արձակուրդ: Խորհուրդը նորոշեց խնդիրըս եւ հրաւիրեց պ. Ս. Մալխասեանին վարելու Քարտուղարի պաշտօնը, ժամանակ աւուր պէտք մինչեւ իմ վերադարձը: Եւեկտեմեքի 8-ին վերադառնալով Պարսկաստանից՝ եւ նորից ստանձնելի Քարտուղարական պաշտօնը, համաձայն խորհրդի որոշման:

Հ. Ուսեքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Իշխակի» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Երեկ գիշերի, Ռուսաց Գործակալություն միջո-
րով՝ Կ. Պոլսից ստացանք հետևեալ հեռագիրը.
Եկեմոմբերի 12-ից. «Հայոց պարտաբաշխանի
մեծ ժողովը պէտք է յանձնի սուլթանին մի
ուղերձ, որի մէջ մատնանիշ պէտք է անի շատ
անգամ եղած խոտուոմների վրայ, և պէտք է
հնդդրի լիեթեանյնէ հայերի ծանր վիճակը փոքր-
սկիայուն և վերականգնել եկեղեցիները և դպ-
սոցները:»

Լուսմէնը, որ Բաղուէի հայոց թատրոնական
լուստեղը արդէն ըստակցութիւններ է սկսել
փոխելիս արքունական և վրաց ազնուականու-
թեան թատրոնները վարչութեան հետ, որպէս
զի մեծ պատկան հայոց դերասանական խումբը
Բաղուէի թիֆլիս սեղադասիսեթուի ներկայացում-
ներ տալ մեր քաղաքում:

Հանգուցեալ Յ ռ Վ Տ անն է ս Խ ա տ ի ս ե ան ի
անունով ստիպեալիս իմնելու համար ստա-
ցանք՝ N.N-ից 100 բուրլի: Ուրեմն նախկին 46
բուրլու հետ այժմ ունենք 146 բուրլի:

Մեկ հազարըրորում էր, որ Ախաբալաբեր հայոց Բա-
րեղյոթական ընկերությունից հալած մտադրե-
րանով մի արհեստանոց, որտեղ աշակերտներն
կարողանալին սովորել ուսալի ան կուլի ին-
Այդ դիտարկումով ինչը շատ համակրելի է և կա-
րելի է իրարորեն առանց մեծ դժուարություն
ներին: Ներկայումս Թիֆլիսում կայ մի այդ տե-
սակ արհեստանոց, որ պատկանում է Սոփո-
կանի:

անուհեով մի պարսնի և դանվում է Վօրճցյով
արձանի մօտ Միքայելեան փողոցի վրա: Այն
արևնաստանոցում, բացի սովորական բանողներին
կան և երեք թօշակաւորներ, որոնք մի աստի
կտայ՝ արգէն իրեր վարպետ, կարող էր լինե
նոր դործ սկսել: Ախալքալարի Բարեգործա
կան ընկերաթեան ձեւը կարող է թէ օգտվ
այդ արհեստանոցի վարպետներին՝ դործ սկսել
շամար և թէ մի երկու աշակերտ ուղարկ
այդ արհեստանոցը՝ սովորելու արհեստը:

Այդ հաղորդում են, որ ղեկավարելի 17-ին վրաց ազնուականների թաղածոմում, միջ տա ղանապար լոմիկ Գ. Տէր-Վառթեանի բնակա գործունեութեան 25-ամեակի առիթով արվելու մի ներկայացում, մասնակցելու Սփարաթ Չմչեկա մի ղեկավարների, Կարախանյանի և Մկրտչյանի

Թիֆլիսի քաղաքային դռման իր վերջին նիստում որոշեց ըստնալ Թիֆլիսում մի ընդհանուր աճ քաղաքի, որտեղ յանկացողները կարող ենայլին աճառելի հանել թէ տան հանկարծական ե թէ ուրիշ ծախու իրերու ե նոյն իսկ ապարանքներ: Դռման կարծում է, որ ապագայում աճըլ դարանը կը դառնայ մի մեծ հիմնարկութիւն որտեղ հանդէս դրած կը լինեն մեծ քանակութիւնումը գտնապան տեսակ ապարանքներ տեղի դիւրամտացիւի գնորդու քան սովորական իսանութիւններում: Այդ տեսակ աճըլապաններ գտրվելու ունեն Պարսկդում, Պետերբուրգում ե ուրիշ քաղաքներում:

Յիշեցնում ենք մեր հասարակության, որ լսողը, կիրակի օր, դեկտեմբերի 14-ին Քիֆլիս ժողովարանի դահլիճում նշանակված է պարահանդես, յոգուտ Կովկասի հայոց Բարեգործական ընկերություն:

Բարձրագույն հրամանով, ղեկավարելի Ե-ին
կողմասեան ցէնզորական կօմիտեի տեղական
արեւելեան լեզուների կրտսեր ցէնզոր կօլլէժով
աստեօր Գրեգոր Կարախանովին չնորված է՝
Ստանիսլավի շքանշանը՝ 2-դ աստիճանի:

Հացիկ թանկանալը Ռուսաստանի ներքին նախարարությունում ստիպում է այնտեղի Ժողովրդի փոխարինել ցույցերի հազը ուրիշ հացահատիկներով և ի միջին այլոց սխմիրդրով: Ուղտավանի նահանգին դիմել են կովկասան Գիւղական տական բնկերութեան, խնդրելով միջնորդ հանդիսանալ՝ գնելու մինչև 15,000 պուդ սխմիրդ: Ինչպէս լսում ենք, արդէն գտնիւ են անձինք որոնք մտադրի են բնկերութեան միջնորդ ծառայել: Դժուարներն սխմիրդը, ցանկացած քանակութեամբ:

ԲԱՎՈՒՅԷ մեզ հաղորդում են հետեւեալ ամս
թաւի փառքը. «Աթենեան երկխոնքի սերահայ
ներեց մի քանիսը երկու հայ և երկու պարսիկ
այս օրերս մի արտաքոյ կարգի հերոսութիւն
դաշինք 600 թուրքով փակեցին թաթարական
միախաչ չորս հոգով լսելու համար: Եւ դերս
սանհները համաձայնվեցին... Իրողութիւնը իր աս
բողջ տեղեկութեամբ և զգուշիկ դոյնով երե
ցատորական կարօտ չէ: Թող ընթերցողը երեւ
կայն, թէ բարբերի ինչպիսին հրէշաւոր տեսն
ներն են այստեղ թաթարութիւն: Յաւալին այն
որ տեղացիների համար զա նշանակութիւն
չունի: Հասարակութիւնը չը դատաւիտեաց ն
րանց, այլ ընդհակառակը, ուրախութեամբ և
խորախաւանդով զրոյցի նիւթ շինեց նրանց ա
հերոսութիւնը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԳԻԿԱՌՈՍԻ ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ ՔԱՂԱՔԻԿ, ՂԻԿՈՆ
ՍԵՐԻ Գ-ԻՄ ՄԻՑ ԵՐՈՍԺ ԵՏ.

«Ձևա՛ գրեանք թէ՛ Եւրօպայի՛ թիւրթիւրը՝ Արիւնկ
դէպքերուն՝ միա՛ ինչ տեղեկութիւններ բերած՝
ձեզի՛ք։ Եւրօպայե՛ն Արեւսանդրիա՛ եկողը՝ կարծ
ինքողիքը՝ կը գտնէ՛ ան չին՝ ժամանակները, ու
առաջադասաւոր աշխարհիս՝ մէկ անկիւնները, մ
մը կը բերէր։ Հարկ է սպասել՝ եօթը ութը
Եւրօպական թիւրթիւր տառնալու, և ան ալ աս
լի ֆրանսերէնները, աշխարհէս բան մը խման
լու համար։ Ինչ և է, մասնաւոր տեղեկութիւնն
կուտան, եթէ՛ արդէն հրատարակած էք, աստ
ոչինչ կը սեպէր։»

Կ. Պօլսում մեծ յուզմունք է տիրում: Պօ
լսիսի անկասկած վախճանում է հայկական Լի

կերտասարք թիւքերի նոր բռնկումներից, և այդ պատճառով նախազգուշական եռանդուն միջոցներ և ձեռք առնում: Պիլերսպահ գնդերը եռապատիվէ են, զօգբքերին հրամայլած է կապմ և պարտաւոր լինել: Շատ հայեր և թիւքքեր կալաւորլած են:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԳԻԱՅԻՑ

(Շարունակութիւն)

Կ. Պ Օ / Ի Ս, հոյեմբերի 28-ին

Ամեն բանի մէջ արդար լինումը, այն է անկեղծութիւնը: Անցեալները «Մշակ» կը կարդայի, լուրջ խմբագրականի մը հանդիպեցայ. Էջմիածնի վրա կը գէթէ: Միջնդեռ ուրիշ թերթներ, գիտնալով հանդերձ ճշմարտութիւնը, ինչ որ իրենց կողակէն պաշտպանե՞լ անոր պակասութիւններն ու թերութիւններն ալ մէկտեղ կը պաշտպանեն և ինչ բանի որ կը հակառակին՝ այլ ևս անոր լաւագոյն կողմերը չեն տեսներ, «Մշակ» իր ունեցած ուղղութիւնով անաչտապէս և անկեղծութեամբ միշտ քննադատած է, առանց քաշուելու, ազգային ամեն հաստատութեանց, ամեն պաշտոնէութեանց թերի կողմերն, առանց սակայն անտես առնելու և անոնց, եթէ ունեն, բարի կողմերը: Այս ճշմարիտ և հրապարակաստեման վայել ուղղութիւնովն է, որ Էջմիածինն ալ ազգին ամենամտերալկան մէկ հաստատութիւնը, չատ անդամ իր քննադատութեան առարկայ բրած է, բայց երբ օտար թերթ մը կենէն անհեթեթ զրպարտութիւններ կրէն ալ ինչ ճանաչատեմանն էր, «Մշակ»՝ միակ լրագրիւր լինի՝ որ անարբեւ անկեղծութեամբ կը զինուի սուտ հաստարակութեան մը դէմ, կը պաշտպանէ ճշմարտութիւնը և չի թողուր, որ անարձայն զրպարտութիւններու նշաւակ լինի ազգային գերագոյն հաստատութիւն մը: Մինչդեռ ուրիշ թերթեր, զգալաւաւար, ոչինչ գրեցին...

բերել ճշմարտութիւն մը՝ որով յայտնի կը լինի թէ մեր Պօլսոյ մէկ քանի թերթիներն ինչ ուղղութեան կը ծառայեն: Ասոնք ոչ գոլութեան մէջ չափ ունեն, ոչ ալ պարսակի մէջ սահման: Աղբային բոլոր հաստատութիւններու մէջ կ'ընէ ուսուցիչն է էջմիածնի Սայր Աթոռն, անշուշտ երկրորդն է Երուսաղէմի պատիւարքական Աթոռն, բայց այս վերջինն մինչև ցայսօր ոչ սնչեան քննադատութեան ենթարկված է Պօլսոյ թերթիներու կողմանէ՝ որքան առաջինը՝ ոտանայ թերթի երէք. ընդհանրական մեր թերթիներն սնչեան կողմանած են Ս. Զակոբեանց միաբանութեան Երուսաղէմի Աթոռն՝ որ թերեւ մարդկայրկեան սը կը փորձի համոզվիլ թէ այլ քաղաքացիներու միաբանութիւնն մի գուցէ աշխարհի լուսաւորութեան վառարանը եւ բարեկարգութեան կեդրոնն եղած լինի:

Մենք մինչև ցայսօր չի տեսնվել Պոլսոյ մէջ, ազգային թերթ մը, որ լուրջ քննադատութիւն մընէ երուսաղէմի այդ կարեւոր հաստատութեան վրայ, բայց այս անգամ, «Մասիս» օրաթերթի ընդ 277 թւոյն մէջ, առաջնորդող—խմբագրական մը որ «Ս. երուսաղէմի պարտէջ» վերնագրին ունի իմ յօդոսարկութիւնս գրաւէջ: Ծայրէ ի ծայր կարգացի գտին, ապաքէն սոսկալի յայտնութիւններ կար կարգաւոր անկարելի է որ մարդ չի քստմնէն է չի գայրամայ, իմանալով այն զեղծումներն որ ի գործ կը դրվին հոգեր երուսաղէմի Ս. Յակոբեան միաբնակութեան մէջ: Բայց երբ մարդ լուրջ խորքադատութեան առարկայ ընէ այդ յօդոսարձը՝ իսկոյն պիտի իմանայ թէ «Մասիս» խմբագրութեան նպատակն ոչ թէ երուսաղէմ քննադատել է, այլ Օրմանեան պատրիարքն չը ունի կապիտոլի գաղաթիւ բարձրացունել՝ պատեղադմի դաշտէն յաղթական վերադարձող աշխարհակալի մը պէտք, սա տրամաբանութեան մը թէ մէկը գովելու համար ուրիշ մի կարաւոր պէտք է»:

«Մասիս»՝ որ մինչև ցայսօր քննադատական մ. բառ մ'անդամ գրած էր երուսաղէմի այդ հաստատութեան վրա, և իբրև խափանեալ «Լոբնեք լրագոր» յաջորդը՝ միշտ գոլովտուրք և անշտղ զրուարիներով ներգրած էր այդ միաբանութիւնն, այսօր ճնճ գիտեր ինչ հովերէ շարժեալ խիստ սոսկալի պարսաւ մը տեղացնելէ, և միտ բանութեանն գլուխ՝ Վհեսպետեան պատրիարքին ալ «խաթերը» չի դպելով՝ քիչ մը չոյելէ ետք՝ դպան մէկն ցնդածի կարգն անցնելէ յետոյ՝ «փառաք յի փառս» կը բարձրացնէ Օրմանաքն պատրիարքն հետեակ սողորով։

«Եւ ոյլ պիտի լինի արժանի նեցուկ Յարութիւն պարտաւարքի, եթէ ոչ Ամենապատիւի, որ Սրբազան պարտիւրքը հայրը (Օրմանանան), որ ցարդ բազմա թիւ պապացոյցներ տուան իւր անձնուէր և արգիւնական դոգմը:

ժ ու ի ն ու թ ե ա ն անխորհրդ անմեղ քաղ-
մաթիւ պաշտօններու մէջ (?) որ աղբիւր վը-
տանաւորները (?) և իր պարտականութիւնը նը-
շանակած են իրան թէ ի դատաւ և թէ այ-
լուր: Ինչ դժուարին կազմութիւններու չէ կա-
րող յաղթել մարդկային կամքը, երբ մանա-
ւանդ այդ կամքը անձնուրաց ոգիէ մը կը բըղ-
լի և կարող ու լուսավոր մտքի մը կընդհա-
նայ: Վարչական ու հաշուական գործողու-
թեանց մէջ, Ս. Պատրիարք Տօր (Օրմանեանի)
ընտանաւոր կարողութիւնն և անժխտելի
փորձառութիւնն արդէն ծանօթ են: Եւ
եթէ լազդաւորները այն բարեւը կազմակերպու-
թիւնն որ աղբիւրին անկերպարան վիճակի
ստացաւ (!) և որ աւուր վրա ստանալու վրա
է (!) աւետարանական տաքաւոր ընդամը դըժ-
արացած միջավայրի մը մէջ, չնորհիւ ամե-
նապատիւ Ս. Պատրիարք Տօր անխնայ ու լու-
սաւոր վարչութեան պիտի հանդիմանէ թէ Ս.
Երուսաղէմաց վանուց մատակարարութեան և
ընդմիջաբան գործունէութեան համար երկրորդն
պատրիարքաց միջն բաժանելի համեմատաբար
թեթեւ ընտր (?) զգալի չը պիտի ըլլայ Ս.
Պատրիարք Տօր համար: Երաւ է, որ արդէն
այդ բնէն անհամեմատ աւելի ծանր կընող
զարգացման տակ ճշմոյշ ունեւոր վրա ար-
դար չէ ծանրացնել այդ բնէն ալ բայց, ինչ-
պէս որ կրնայինք ընել մը վերը, պարտաճանաչ
և կարող հոգեւորականաց անցնել ու ներկայ
ստիկն մէջ, պարտաւոր եմք կրկին և կրկին
հաշուել արդէն յօժարական անձնաւորութեանց
վրա մի քանի արժանատիւներու, որոնք չեն
կարող մտնալ Աւետարանի սան պատուէրը
թէ: Հաստ պիտի պահանջվի անոնցմէ, որոնք
չատ տրուեցան:

Խաղաղականութիւն վերադառնալ տողերը հիմնական
են նախընթացի մը վրա թէ՛ Երուսաղէմ վան-
քը «սե քողի տակ պահաւորող սե վերաբերու-
ւոր գործերու» ձեռք մատնելով ինկուլթ երեսուն
հազար լիւրացի պարսկէ անկարող պիտի լինի
վճարել և թէ Զարմարիւն պատրիարքը, որքան ալ
խաղաղականաց աչքեր ունի և իր պատկանելի
ներկայութիւնով կը հասկնայ իրաց վիճակն ու
զեղծութիւններու խորը կրնայ թափանցել, սակայն
այլ ևս հանգստեան պէտք ունենալուն՝ Օրմա-
նեան և միջիւր Օրմանեան պիտի կրնայ վերել
վանքը՝ թէ իր պարսկէն և թէ այդ սե վերաբ-
երուտուր գործերէն, այսպէս վկայել է արժանա-
հատու անձ մը որ Երուսաղէմէն դարձել է և
այս վկայութեան վրա հիմնած է «Մատիս» իր
խաղաղականութիւն:

Եթէ Օրմանեանի մասին վերադառնալ գովա-
տով վերջացած չը լինէր յօդուածն, եթէ մեր
Պաշտօն հայ թերթներու տանայ Politique de la
chevre et du chou-ի քաղաքականութիւնն, ինչ-
պէս որ է, պատկերացած չը լինէր աչքերուս առ-
ջն, «Մատիս» անկեղծութեանը պիտի վստա-
հէի անշուշտ, բայց դժբաղդաբար ինչպիսի ուրիշ
դոյն առաւ և շու վերաբերուտուր գործերն» յայտ-
նելու ժամանակ «Մատիս» ինքը «կանոնաչ վե-
րաբերուով» փաթեթով տեղափոխուաւ հրապարակի
վրա և Օրմանեանն որ առանց բան մը ընելու
յամանայի կերպի իր անունն doctorat-ներովն
այս դուգաղէպ առիթով Երուսաղէմի ու Զարմ-
արայ միաբանութեան քաղաքականութեան ոգին
և շու վերաբերուտուր գործերն» գրանելու կարող doc-
torat-ն որ ուրեմն յայտնուեցաւ ի լուր աշխարհի
հոգալի: Եւ գիտե՞ք ձվ է եղեր «Մատիս» ար-
ժանաւ հաւատ անձը: «Մերթէթ» անուն թերթը
թերթի մը խմբագրութեան յոյն մը՝ որ իրենց
թերթին Երուսաղէմի մէջ տարածելու համար հին
գնացել և վերադարձել է մայրաքաղաք... Արդ
այս է և այդ պէտք է լինի հայ խմբագրի մը ան-
կեղծութիւնը... Քննադատութիւնը կը հասկը-
նամք բառին ամբողջովն նշանակութիւնովը
բայց կրօնական մեծ հաստատութիւն մը թերթ
թերթելու և օտար աղբիւրու առջն թշնամանե-
լու չափ առաջ երթալ՝ ոչ, այդ երբեք չենք կա-
րող հակընդդէմ:

Արդար լինեմք, «մթութեան վերաբերուով» մէջ
թողուլ պէտք չէ այսպիսի խնդիր մը՝ որ այն-
քան զայնկալական դարձեր է հրապարակի վրա,
պէտք է ճշմարտութիւնն երեսուն հանել:

Երուսաղէմի հայոց վանքը՝ կընդունիմք թէ
չատ թերթութիւններ կրնայ ունենալ, որով և
քննադատութիւններու ներքե կրնայ մանել, մենք
առաջինն ենք զայն քննադատող՝ իբրեւ անկեղծ
բարեկամ նոյն հաստատութեան, որ կրնայ մե-
ծամեծ արդիւնքներ ցոյց տալ աղբիւրն բայց չենք
կրնար ընդունել թէ՛ այդ հաստատութիւնն իր
մէջ «սե վերաբերուտուր գործեր» կրնայ պահել
կամ անբարոյականութեան առաջնորդել: Այդ
բայցարժանի ստատ է և լոյ թշնամութեան ար-
դիւնքը, մանաւանդ թէ Զարմարիւն պատրիարքը
թէ և ծեր, սակայն տակաւին չատ կարող է ա-
ռանց ակնոցի դիտելու իր չորսը գտնուող գո-
ղերը, եթէ իրօք կան, իսկ անստեղծութեան
զայտը՝ ամեն ոք կը վկայէ թէ նա իր doctorat-ն
Օրմանեանէ շատ կանուխ առած և ծոցը դը-
րած է:

Մենք կատարեալ անկեղծութիւնով կը գրեմք
այս տողերը, բայց որպէս զի ճշմարտութիւնը
մտնել տեսնուի, ու Զարմարայ միաբանութեան
կը մնայ կարեւոր սպառնացնելով պարզել իրաց
ստեղծութիւնն և զայնկալական միտքերը բոլոր
եթէ կան: Այս է մեր փափագը:

Վասն

ՆԱԽԱԿ ԿԻՊՐՈՍԻՅ

Լատնական, գիտեմքներ 3-ին

Նաե չէ անցնում այստեղից, որ մէկ-երկու
հայ չը թողնէ այս կողմերում: Բոլորն էլ երկիր
վերադարձողներ են, սակայն առաջին նաւանան-
գատից դուրս գրկված: Աղքատ, յուսահատ, ձեռ-
քը ծոցին, կը տեսնու մի թշուառ է անցնում
նաւատարացին, ծամբորդ է, չչկլված, չը գիտէ
էլ, թէ ինչի դուրս եկաւ այստեղ, չը գիտէ նոյն-
պէս, թէ ինչ երկիր ընկած: Բաւական է, որ ցա-
մար է, ուր կարելի է իջնել, ուր իրան չեն ա-
սի՝ «չէ կարելի»: Դա հայ է: Եւ քանի քանի այդ-
պիսի անհասներ Եգիպտոս ու այլ տեղեր են իջ-
նում՝ բարբառի ակտայ:

Հասնելը կան, որոնց ընտանիքը երկրումն է:
Պատուիրտ աշխատաւոր վերադարձել է իր սե-
րելիներին տեսնելու միակ տեղով և ինչ,—
ստում են՝ «չէ կարելի»: Մօտ օրերս մի ընտանիք
է գնացել Ալեքսանդրէթ: Կարող էք երեսակայել,—
կնոջը և երկուսներին ընդունել են ներս, իսկ աղա-
մարդուն—աշխատաւորին՝ ետ դրկել: Եւ մարդիկ
կան, նոյն իսկ կառավարութիւններ, որոնք աշ-
խարհին յայտնում են թէ թերբը այլ ևս չէ հա-
լածում, կոտորած չէ անում:

Կնչպէս ընթերցողները գիտեն իմ նախորդ
թղթակցութիւնից, թիւ բնագ իստականութեան
կողմից Կիւրիկայի մէջ ձեռք առած խտու-
թիւններին ու ձեռնարկութիւններին համարեալ
համաձայնաբար կերպով երկարվել են և յոյներ
ու եւրօպացիներ: Դէպքեր տեղի են ունեցել
Մերթիւն և Կիւրիկայի դառնալու քաղաքների
մէջ: Թիւ բնագ կառավարութիւնը չլացած վեր-
ջին տարիներին անպատիժ գործած իր կամայա-
կանութիւններից հայերի վերադարձումը՝ քիչ էր
մնում, որ ինքը իւր ձեռքով հռչակաւոր «ներքաշ-
նակութիւն» խանդաբեր ի վնաս իր և հայի
հաղ այդ սխալի առաջն առաւ: Դրան ապացոյց
աւտարական «Լոյդ» չաղնաւային ընկերու-
թեան աղետն—Բրաքաֆօլիի դէպքը, որը քիչ
մնաց ընդհարում պիտի առաջ բերէր Աւտարիւն
և Թիւրքիայի մէջ: Սակայն այս անգամ Թիւր-
քիան ընկճվեց և սարակի նման հնազանդեց:
Մանրամասնութիւնները հեռագրերից արդէն
յայտնի են ձեռք: Մար.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Թիւրք-լատնական պատերազմը, ստում է «HO-
BOCTH» լրագիրը իր առաջնորդողում, մի վերին
ատմականի ստուր հետեւեց ունեցաւ: Նա բարձ-
րացրեց մանամաղան ազգայնականութեան ոգին
և չափազանց յանդուգն դարձրեց նրանց: Թիւր-
քերը միանգամից զգացնել տուեցին իրանց ոյժը
Բ. Դրան երկակայ քրիստոնեայ ազգերին: Թիւր-
քաց այդ ոգին ամենից շատ արտայայտվեց
Մակեդոնիայի դառնալու կէտերում: Անկախութիւն,
Փոքր-Ասիայում, անպաշտպան հայերի վրա աւելի
էլ ծանր է թիւրքաց ճնշումը, բայց Փոքր-Ասիա-
յից թիւրքաց քաղաքորդութիւնների մասին ուշ
են հասնում տեղեկութիւնները, այն ինչ Մակե-
դոնիան գտնում է եւրօպական շատ գործակա-
նների անմիջական հակադրութեան տակ: Թիւրքաց
կիսապաշտօնական «Մարմարի» լրագիրը հազար-
գում է, որ մակեդոնական մի գիւղում գտնվել
են շատ զինքեր, դիմաւոր և այլն: Այդ լրագրի
խօսքով՝ Մակեդոնիայի պալատական ազգայնա-
կութիւնը պատրաստվում է ապստամբել Բ.
Դրան դէմ: Ամենից անախորժ այն հանգամանքն
է, որ ինչի Բ. Դրան է աշխատում առաջացնել
այդ շարժումը: Այդպիսի պայմաններում համա-
րես անօրոգէտ է խօսել թիւրքաց թէթրօնների
մասին Մակեդոնիայում: Արեւել խոստացվեցին,
ինչպէս և խոստացված էին հայերին, բայց չիրա-
գործվեցին: Բ. Դրանը սպասում է դէպքերին, որ-
պէս զի կարողանայ արդարանալ:

—Կ. Պոլսից լրագրիներին գրում են, «Աղ-
բիւր» և Թիւրքիայի մէջ յարաբերութիւնները
դեռ ևս չատ լարված են, չը նայելով խաղաղու-
թեանը, որով և կարելի է բացատրել այն փաստը,
որ միայն օսմանեան զեկտանը այցելութիւն չը
գործեց լոյք Սոքրիկի միջոցով: Երբեք, ուր-
եք թիւրքիան վաղուց արդէն կատարած
է Աղբիւրի դէմ, որովհետեւ Կ. Պոլսում շատ լա-
զիտն, որ Աղբիւրն շատ հեշտ կարող է երաշ-
խաւորել 800-000 թիւրքաց լրագրի կանխավճարը,
որ Բ. Դրանը աշխատում է ստանալ օսմանեան
բանկից: Բրիտանական կառավարութիւնը այդ
երաշխաւորութիւնը չը տուեց այն հիման վրա,
որ առկալանը չէ համաձայնութեամբ Արեւելի նահա-
պետ նշանակել մի օտարահայտակար: Եթէ այդ
հանգամանքը չը լինէր, 800-000 լրան վաղուց
թիւրքերի ձեռքում կը լինէր:

—Պարիզից հեռագրում են գիտեմքների 6-ից,
«Երեկ» «Renaissance» թատրոնում Օկտավ Մի-
րօի հակաօգնականութեան պիւր ներկայացնելու
ժամանակ, տեղի ունեցան անհրաժեշտ Սարա-
Բէնար, որ խաղում էր պիւետում, իրօք աշխա-
տում էր հանգստացնել աղաղակողներին: Միտք-
ված եղան ներկայացումը ընդհատել:

—Ինքիցից հեռագրում են, որ Վիլհելմ կայսրը
այցիկից իշխան Բիսմարկին իր երախտագիտու-
թեան յայտնելու այն օգնութեան համար, որ
իշխան Բիսմարկ ցոյց էր տալիս նաւատորմը
գործընկերու նախագծին:

—Պարիզից հեռագրում են, «Eclair» ասում է,
թէ ուսաց նաւատորմի Պօրտ-Սլոուր մտնելու
որ տեղի ունեցաւ: Կիւ-Չաու գերմանացիների
ձեռքով գրավուելու մի փոքր յետոյ, ունի ըստ
երեւոյթի, աւելի մեծ նշանակութիւն չը նայելով
ուսաց աղբիւրից ստացված տեղեկութեանը և
այն բանին, որ ուսաց նաւերի Պօրտ-Սլոուր-
ում ձեռք մնալու նախատեսում էին ան-
կապած է, որ գերմանացիները գրանից օչուտ
կը քաղեն, որպէս զի հրամարկին Կիւ-Չաու-ից
հեռանալուց: Ինչ վերաբերում է անգլիացիներ-
ին հաւատացնում են, թէ նրանք մտադրու-
թիւն ունեն մի որ և է հարուած տալ իրանց
սովորութեան համեմատ: Հետեւաբար Ֆրանսիայի
համար հասել է չը թմրելու վայրկեանը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Դրակ ան դատ: Նոյնից 22-ին Կայրէշի
տեղական դատարանում քննում էր «Saaga»
(«Կաջակ») լրագրի խմբագրի գործը, որը մի-
ղաղրվում էր ինչպիսի անհամարութիւնը վերա-
ւարդ տանաւոր տպելու համար: Ահա այդ գոր-
ծի մի քանի մանրամասնութիւնները.

Գործի ղեկավարող յետոյ, պրօկուրորը պահան-
ջեց խմբագրի պատմել երեք միջադրողներին
այն է՝ «Saaga» լրագրի խմբագրի Ահմէդ-Ֆուա-
դին չէիք իշ-Մանֆաւօսիին և ապաքանտեղ
Էլ-Կիսմիսին: Իր պաշտպանողական ձառի մէջ
Ահմէդ-Ֆուադը ասաց, թէ ինչն ոչ առաջինն է և
ոչ էլ վերջինը, որ պախաբանութեամբ է իշխանի կամ
թագաւորի քաղաքական կամ վարչական գործե-
րը: Այդ առիթով նա մասնաւորապէս արեւ զգոս
իրաւաբանների գործունէութեան երանակի վրա
Վիկտորիա թագուհու յօրեղեանի տնտեսութեան
թեան ժամանակ, որոնք այնպէս հեռու գնացին,
որ թագուհու արձանը սե չորով ծածկեցին: Ա-
պա նա ինչեք այն դէպքը, երբ թագուհու մի
հաւատարմի հպտակի դատի կանչելով մի ու-
րիշ քաղաքացու, որը զլիարկ չէր հանել թա-
գուհու անցնելու ժամանակ, ինչքան դատաւարա-
վեց: Որպէս օրինակ նա բերեց նոյնպէս Ումբէր-
տօ թագաւորի պատախարհը Սիամի թագաւորին,
երբ վերջինը հարցրեց, թէ ինչու նա չը հրամա-
նէ մահան պատժի ենթարկել իր զէմ յանցա-
ւոր փոքր անուղին: Ումբէրտօ թագաւորը պա-
տաւորանեց, թէ թագաւորները պէտք է արդար
և ողորմած լինին ինչպի իրանց հպտակները:
Ահմէդ Ֆուադը ասաց, թէ Աբբաս I փո-
խաբան շատերին էր ստոծում մէկի յանցանքի
համար, որ փախաբան լինէր, որը յայտ-
նի էր իր բարարութեան համար, հրամայեց նոր
թիւնանով ուղարկուել մի գիւղ՝ թշնամութիւն
փորձելու համար: Մէհմէդ-Ալին և նրա յանդը-
ների անարդարութեան բարբարոսութեան և
զազանութեան էլի մի քանի օրինակներ բերեց:
Դատարանը Ահմէդ-Ֆուադին դատաւարաց 20
ամսով լատնարկութեան և 3000 պիստոն տու-
ղանքի չէիք իշ-Մանֆաւօսիին մի տարվայ
լատնարկութեան և 150 պիստոն տուղանքի, իսկ
ապաքանտեղին՝ արդարացրեց: Այդ խիստ
դատաւիճիւր ընդհանուր կարծիքով երկու կը
վերացնի վնասը մտնում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԵ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻԶ, 10 գիտեմքների: Պատգամաւորներ ժո-
ղով քուէարկեց մի նախագիծ, որով Տալտի կղզին
Ֆրանսիական կառավարչների շարքն է ընկնում:

Պանամական դատը: Քննութիւնները վերջա-
ցան: Բոլոր միջադրողները ետանդուն կերպով
մեքում են իրանց վրա բարեւոյ մեղադրանք-
ները: Արեւելի վիճակի ցուցմունքները:

ՀՆՈՒՄՈՒՆ, 10 գիտեմքների: Այստեղ հասաւ
գերմանական «Կայսր»-ի Ալգուտտս կընթերցը:

Կ. ՊՈԼԻՍ, 10 գիտեմքների: Լուր է պտուում,
որ չէրօգորցի Բօժօ Պետրովիչի թիւնանութեանը
Կրեմլի ընդհանուր նահանգապետի պաշտօնի հա-
մար՝ հաւանութիւն են տուել բոլոր պետութիւն-
ները:

Կ. ՊՈԼԻՍ, 11 գիտեմքների: Կամպոպիլէնէր-
փաշան, հետեւի զօրքի ինտրուկտորը, նշանակ-
ված է նաւատորմը վերակազմելու համար կազմ-
ված նոր յանձնաժողովի նախագահ: Այդ նախա-
գծի իրաւորումը չուտ չէ սպասուում, գործը կը յե-
տաճգվի մինչեւ այն ժամանակ, երբ Ֆինանս-
ները աւելի լաւ գործեան մէջ կը լինեն:

Լուրերին նայելով Բ. Դրանը աշխատում է ստա-
նալ օսմանեան բանկից, տասնորդի հարկի երաշ-
խաւորութեամբ, 500-000-ից մինչեւ 600-000 լի-
րա կանխիկ գումար, զօրքերի փոխադրութեան
ծախսերն անկու համար:

ԵՌԿՈՂԱՄՍ, 11 գիտեմքների: Գիտեմքների 9-ին
եռապահան պարաւանտը վերակեց իր նստա-
քը: Քաղաքական երեք զլիարկ կուսակ-
ցութիւնները կատարեալ համաձայնութիւն կա-
յացրին: Կարծում են, որ պատգամաւորների ժո-
ղով իր անխտանութիւնը կը յայտնի կատաւա-
րութեանը:

ԼՕՆԻՕՆ, 11 գիտեմքների: «Standard» լրագրին
Կ. Պոլսից հեռագրում են, «Գետապանները մշակե-
ցին Կրեմլի նոր կազմակերպութեան նախագիծը,
որ բողոքացած է հետեւեալ կէտերից. ժամանակա-
ւոր նահանգապետ նշանակել, 6 միլիոն փոխաւո-
թիւն անել՝ մաքսային տուրքերի երաշխաւորու-
թեամբ. ժամադրելու կազմակերպել, խորհրդակ-
ցական ժողով հաստատել, որի անդամները
լիազորութիւններ կը ստանան պետութիւններից:
Այդ ժողովը պէտք է մշակէ կղզու ինքնավար
սահմանադրութեան նախագիծը, որի հիման վրա
կընտրվի հինգ տարի ժամանակով և սուլթանի
համաձայնութեամբ քրիստոնեայ նահանգապետ և
պատրաստութիւններ կը տեսնվին ազգային ժո-
ղով հրաւիրելու համար: Վերջինիս կը տրվի
կառավարչական օրենսդրական իշխանութիւն, իսկ
նահանգապետը կունենայ բարձր կատարողական
իշխանութիւն: Կրեմլն կը լինի ինքնավար և չէ-
զօք նահանգ թիւրքից:

ԲԵՐԼԻՆ, 11 գիտեմքների: «Magdeburgische
Zeitung» անձիւք է յայտարարում «Star» լրա-
գրի այն տեղեկութիւնը, թէ զաղտնի համաձայ-
նութիւն է կայացել Նօրթի Կերօնային ընկե-
րութեան և Standard Oil company ընկերու-
թեան մէջ: Նօրթի ընկերութեան Բերլինի բա-
ժանմունքը ընդարձակ միջոցներ է ձեռք առ-
նում գերմանական գործը ընդլայնելու համար:
Կերօնի գին գրովթիւր էապէս լաւացաւ, չնո-
հիւ Ֆրանսիայի պակասելուն: Ուսաց և զեր-
մանական երկաթուղիների վրա երէկ սկսեց
գործադրվել ուսուցիչական երկաթուղիական
դաշնակցութեան տարիֆային դաշնագիրը, որով
չատ պակասեցած են տարիֆները ուսաց այն
մաքում կերպով վրա, որ ուղարկվում է իշ-
րայից դէպի արեւելք գտնվող կայարանները, բա-
ցի Գրեզդնից, Լէյպցիգից, Հալէպից և Մագդե-
բուրգից:

ՎԻԵՆՆԱ, 11 գիտեմքների: Չէխական պատ-
գամաւորների չլրջաններում դրականապէս հաս-
տատում են, որ մինչեւ բօնեմանի սէյմի գո-
մարվելը նոր կանոնադրութիւն կը հրատարակվի
լեզուների մասին, որով դատարաններում և վար-
չութեան մէջ լեզուի վերաբերեալ այժմեան կա-
նոնադրութեան որոշումները այն ատիճան փոխ-
ված կը լինեն, որ երկու լեզուի միտմանի փո-
խանակ կը լինի երեքըզեան սիտում: Երբ
մէկ մասում պաշտօնական լեզուն կը համարվի
գերմաներէնը, միւսում—չէխերէնը և երրոր-
դում՝ երկու լեզունն ևս:

Կ. ՊՈԼԻՍ, 11 գիտեմքների: Լուր է պտուում,
որ սուլթանը կը տալ բոլորական երեք բերթի-
ներ: Բոլորական երեք կառավարչներ հասան
այստեղ նոր կալիսկոպոններ ձեռնադրելու հա-
մար:

ՎԻԵՆՆԱ, 11 գիտեմքների: Աւտարիական
պատգամաւորներ ժողովում երեստարակ չէխե-
րի կառակցութեան անգամ Գէրօլդ ապագայա-
նում էր, որ գերմանացիների հետ համաձայնու-
թիւնը հարաւոր է միայն երկու լեզուների հա-
ւատար իրաւունքների հիման վրա չէխական երկր-
ների այն տեղերում, ուր գերմանացիները և չէ-
խներ հաւատար լիւր են գտնուում, և չէխական
թագաւորութեան կատարեալ անհեռաւորութեան
թեան հիման վրա:

Կիրակի, դեկտեմբերի 14-ին

Թիֆլիսի ժողովրդական թատրոնի ԿԱՅԱՆՈՒՄ

ՊԵՐԱՀԱՆԴԻՍ ԲԱՐԵՐՈՎ

Յօգուտ Հայոց Բարեգործական Հանձնարարական

Բաղարի սկիզբը երեկոյան ժամը 8-ին: Մուտքը—2 ռ. 10 կ. նույնպես լինենք բնակավայրում ևն բնակավայրում կամ ինչ. Մ. Թատրոնի մաս: (№ 140) 3—3

Открыта подписка на 1898 годъ на газету

„КАСПІЙ“

(XVIII годъ изданія)

Въ 1898 году «Каспій», въ Баку, ежедневно будетъ выходить въ значительно увеличенномъ форматѣ («Русскихъ Вѣдомостей») по прежней программѣ газеты литературной, общественной и политической, съ обширнымъ нефтянымъ отдѣломъ, при той же самой подписной цѣнѣ.

Подписная цѣна:

Съ доставкой: на 12 мѣс.—7 р., на 11 мѣс.—6 р. 50 коп., на 10 мѣс.—6 р., на 9 мѣс.—5 р. 50 коп., на 8 мѣс.—5 р., на 7 мѣс.—4 р. 50 коп., на 6 мѣс.—4 р., на 5 мѣс.—3 р. 50 коп., на 4 мѣс.—3 р., на 3 мѣс.—2 р. 50 коп., на 2 мѣс.—2 р. и на 1 мѣс.—1 р.

Съ пересылкой: на 12 мѣс.—8 р. 50 коп., на 11 мѣс.—7 р. 50 коп., на 10 мѣс.—7 р. 50 коп., на 9 мѣс.—6 р. 50 коп., на 8 мѣс.—6 р., на 7 мѣс.—5 р. 50 коп., на 6 мѣс.—5 р., на 5 мѣс.—4 р. 50 коп., на 4 мѣс.—4 р., на 3 мѣс.—3 р., на 2 мѣс.—2 р. 50 коп., и на 1 мѣс.—1 р. 50 коп.

За границу: на годъ 13 руб. на полгода 7 руб.

Допускается разсрочка платежа подписныхъ денегъ на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится не менѣе 3 руб. городскими и 4 руб. 50 коп. иногородними подписчиками; затѣмъ 15 февраля—2 р. и 15 марта—2 руб.

Иногородные адресуютъ свои требованія: въ Баку, въ редакцію газеты «Каспій».

Лица, подписавшіяся (безъ разсрочки) на годовое изданіе «Каспій» 1898 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году, со дня подписки.

Подписка принимается: въ Баку—въ конторѣ газеты, Армянская улица, домъ Красильникова; въ Тифлисѣ—въ книжн. магазинѣ Хиддиеллы, у И. К. Словинскаго; въ Кутаисѣ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе, противъ собора, на Тифлисской ул., собственный домъ; въ Батумѣ—при книжно-газетномъ агентствѣ М. Николадзе; въ Елисаветполѣ—у Г. А. Альтаузепа, при его торговлѣ аптекарскими товарами; въ Москвѣ—въ конторѣ Метцль; въ Н.-Новгородѣ—въ Рождественскомъ газетномъ кіоскѣ, и во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ столицъ и провинцій. 1—3

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ

На политическую, общественную и литературную газету

„КАЗБЕКЪ“

(ГОДЪ ИЗДАНІЯ ТРЕТІЙ)

Выходитъ во Владикавказѣ три раза въ недѣлю, а въ прочіе дни по мѣрѣ накопленія матеріала выпускаются прибавленія, въ коихъ печатаются телеграммы, справочныя свѣдѣнія и объявленія.

Возбуждено ходатайство о разрѣшеніи выпускать газету вмѣсто трехъ разъ въ недѣлю—ежедневно, безъ увеличенія подписной платы. Составъ редакціи увеличенъ.

Программа газеты: 1) Дѣйствія и распоряженія правительства; 2) Статьи по экономическимъ, этнографическимъ, бытовымъ и другимъ вопросамъ, касающимся Кавказа вообще и Терской области по преимуществу; 3) Хроника, мѣстные происшествія, извѣстія внутреннія и внѣшнія съ указаніемъ ихъ источниковъ; 4) Корреспонденціи изъ разныхъ мѣстъ и телеграммы; 5) Судебная хроника, безъ обсужденія рѣшеній; 6) Фельетоны, новости изъ области науки и искусствъ, повѣсти, рассказы, очерки оригинальныя и переводные, статьи популярно-научнаго содержанія; 7) Смѣсь, справочныя свѣдѣнія и объявленія.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

Съ доставкой на домъ во Владикавказѣ: на 12 мѣсяцевъ 6 р. 00 к., на 6 мѣсяцевъ 3 р. 50 к., 3 мѣсяца 2 р., 00 к., 1 мѣсяць 75 к., съ пересылкой по почтѣ иногороднимъ: на 12 мѣсяцевъ 7 р., на 6 мѣсяцевъ 4 р., на 3 мѣсяца 2 р. 50 к., на 1 мѣсяць 1 р.

Подписка принимается во Владикавказѣ, Грозненская ул. д. Б. Казарова—у издателя газеты С. І. Казарова. Годовые подписчики на 1898 годъ подписавшіеся раньше 1-го января будутъ получать газету со дня подписки безплатно. 1—3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Չեմարիկի առևտրական և գործարարական հաշուապահ առթիվ»

ՈՒՍՈՒՅԱՆՈՒՄ Է ՆԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվա ընթացքում հաշվապահությունը գործադրողներին, երաշխավորելով, և եղած դեպքերում լսման է առնում պայծառի առաջարկեր:

ՊԱՐԱՊՄՈՒՆԻԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշվապահությունը ըստ ամենայնի առևտրական հիշգրիտ, հանդերձ նախապես արդիւնաբերական և կերտվող գործարարական հաշվառման:

Բ) Առևտրական թուղթերի:

Գ) Առևտրական նամակագրություն:

Դ) Գեղարվեստական և ամենապատճենների ուղղություն:

Պարագմունքները սկսվելու են յոնվարի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շաբաթավերջեր ևն իրարանջիւր ՉՈՐՄ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործարարական պարագմունքներ:

Յանկայությունը թող դիմեն գրառք կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիևիկայա փողոց, տուն 1 խիլկանի, № 20:

Վերոյիշեալ հաշվապահության ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիլկանի գրա-վաճառանոցում և հեղինակի մոտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆԵՆ 3 ռ. 50 կոպեկ: Օտարաբարդացիները գիրքը գնելու համար կարող են գրմել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու: (2.) (№ 76) 3—15

ԱՄԻՐԱՂԱՅՆԵՐ

Պատրաստում է, ինչպէս մասնագիտութիւն, Ինժեներներ

ԵՐԱՆՈՎԻ ԵՆԻՐԱՆՈՎԻ

Գործարար, Թիֆլիսում, Ալեքսանդրեան փողոց, սեփական տուն:

(№ 102)

36—0

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C^{ie}

ՅԲԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից:

Եւ հախաւոր թափումից Մարսէլ, մանկավ Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Միևնում է Բաթումից չորեքշաբթի 24 դեկտեմբերի (5 յունվարի) ՄԻՆԳՐԵՒԻ չորեքշաբթի, նաւապետ ՇԷՏԻ: Եւ այդպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարներ արվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասն հարկաւոր տեղեկութիւնների տաճարը համար թող բարեհաճեն դիմել ընկերության գործադրողներին:

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. վիկտոր ԳՆԻՆՈՒՄ, Կարէքժայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկճայա: ՆԵԱՆԻՆ, Սիմի փող. նախկին Արծրանու քարվանսարա: ԲԱԳՈՒՄ—պ. Ս. Գիլգարեանին, Կոլլուբանիսայա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍՍԻՅԱ—պ. ՄԷԼԻՍԻ Զերէնրօգերին: (№ 76) 4—20



ԿՏԱԻԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Բաղրակի մանուածքի)

ԺԱՌԱՆԳՈՒՅԻՆԵՐԻ 3. ԶԻԹԱԻԵԱՆԻ

(Հիմնված է 1869 թ.)

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

ԿՏԱԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ 15—30 ՎԵՐՇՈՎ ԼԱՅՆՈՒԹԵԱՄԻ

ԿՏԱԻ I ՏԵՍԱԿԻ 15—30

ԿՏԱԻ ՀԱՍՍ 12—30

(մանուաւոր պատուէրներով)

ԹԵԼ ԿՐԻՆԵՐՈՎ

ԹՈՎ ԲԱՄԲԱԿԻ ԹԵԼԻՑ 1/4—3/4 ՀԱՍՏՈՒԹԵԱՄԻ

ԹԵԼԻ ԾԱՅՐԵՐ (պակս) ՄԵԲԵՆԱՆԵՐ ՄԱԲԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԲԱՄԲԱԿ ՄԱԲԵԼՈՒ (պակս) I ՏԵՍԱԿԻ

ԲԱՄԲԱԿ ՄԱԲԵԼՈՒ II

ԲԱՄԲԱԿ ԹԵԼԹԵՐՈՎ I ՍՈՍԻՆՉՈՎ (մանուաւոր պատուէրներով)

ԲԱՄԲԱԿ ԹԵԼԹԵՐՈՎ II ՆՇՇՇՈՎ

Առաջարկում ենք պ.պ. վաճառականներին և գործածողներին ուղարկելու զարմնիկ մեր գործարարական պարագանքից կտաւ ամբողջական և ներկեր ընդունելու յապակութեան վրա և չը չլորեն Ռուսաստանից եկած կտաւների հետ:

Կտաւի նմուշները և պրէյնդերանները ուղարկվում են ըստ առաջին պահանջման ձրիաբար: Հասցէն՝ Թիֆլիս, գլխաւ կոնտոր ֆաբրիկ. Մոլոդոյ Նագորնոյ և Սերգիևսկոյ լ. զոբ. Դ. տելեֆոն կոնտոր 266, ֆաբրիկ 24. (2. Ե.) (№ 78) 38—50

ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԳՆԵԼ

Կովկասեան ողջ վայրե-

պէս եղջերուների ահազին ՊՕ-

նի կենդանիներ, ինչպէս՝ եղ-

ՋԵՐ բազմաթիւ ձիւղաւորու-

ՋԵՐՈՒՆԵՐ, ԿԵՏԱՐՆԵՐ, ՎԱՅ-

Թիւներով: Միևնում է իրար:

ԲԻ ԱՅՏԵՐ, ԱՐՏԻԿԵՐ, ՋԵՑ-

փող. № 106, բաղում, ա. Բա-

ԲԱՆԵՐ, ՎԱԳՐԵՐ, ՅՈՎԱԶ-

բամբակ:

ՆԵՐ, ԲՈՐԵՆԵՐ, Նոյն-

ԳՈՒԳՕ ՎԵՆԵԼԵՐ

(№ 144)

2—6

ԵՂԲ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑՆԵՐԻ

1880 թ.ից Բաղրա քաղաքում գործելու ունեցող «ԲԱՎՅԱՆԵՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ», որ գտնվում էր Օլգինիսկայա փողոց, Բ. Կարգեանցի տ., և որ անցել 1896 թ. ապրիլ ամսում պատահար հրդեհից այրվեց, ԱՅՈՒՄ ԴՈՒՐԻՑ ԲԱՅԼԵԼ Է հոկտեմբեր ամսից նայն ՕԼԳԻՆԻՍԿԱՅԱ փողոցի վրա, ՇԱԳԻ-ԳԱՆԵԱՆՑԻ պատասխան, № 2 և 3, հետեւալ ֆիրմայով:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ՔԱՂՅՐԱԵՆԵՐԻ

ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ ՆԵՒ ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

(CONFISERIE CENTRALE)

Գործարարը ընդունում է ամեն տեսակ քաղցրաւոյնների պատւերներ և կատարում է բոլոր թարմ նիւթերից և ամենայն բարեխղճութեամբ: Բացի դրանից, խանութում ամեն օր կարելի է տաճար պատրաստի զանազան թարմ քաղցրաւոյնից և խմորիկէն: Խանութն ունի առանձին կահաւորած սենեակ, որտեղ կարելի է ստանալ թէյ, սուրճ, չօկոլաթ, կակաօ և զանազան զովա-ցուցիչ խմիչքներ:

(№ 122)

6—6

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ Ս. Է ԶՄԻԱՏԵՐԻ

Փառակազմ եւ պատկերազարդ

ՕՐԱՅՈՑՑ 1898 թ.

Վհախաւ կաթողիկոսի, ա. Էյմիամի, Գեորգեան ձեռնարանի և այլ պատկերներով զարդարված, այլ և աւելի հարուստ եկեղեցական և վիճակագրական տեղեկութիւններով: Վաճառվում է վիճակային կոմսիտորաններում և հազար կառավարութիւններում: Թիֆլիսում՝ Կենտրոնական, իսկ Բաղրում՝ Բաթիֆի, գրավաճառանոցներում: Մեծ քանակութեամբ գնողին 20% զիջումն կը լինի: Պէտք է դիմել ա. Էյմիամի տպարանական ժողովին այս հասցեով՝ ԵՎԻԱԴՅԻՆԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՄԻ. (№ 114) 7—10

ՄԻԱՆՉՆ

Որ եղել է վարժուհի հայոց գրողներում

Բուխարյաների և առևտրական քուարանութեան

Կտաւ է տալիս երկու սեռի անձանց ՉԱՓԱԿՈՐ ԳՆՈՎ, և կրկնութիւն է անում: Չոնեւորների հետ (եթէ աղքատութեան վիճական ներկայացնեն) պարագում է ՉՐԻ: Նոյն-պէս կրկնութիւններ է անում թուարանութիւնից՝ ցածր դասարանների համար: Հասցէն՝ Կուկիա, Ալեքսանդրօվսկայա փողոց, № 33, մուտքը բաղկից: (№ 136) 5—5